# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2023 թվականի N 1601-Ն

ԱՌԱՆՑ «ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱՆՑՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԱՆՑՄԱՆ ԿԵՏՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԺԱՄԱՆՄԱՆ ՎԱՅՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԱՅՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՉՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԵԿ ՎԱՅՐԻՑ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՉՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԵԿ ԱՅԼ ՎԱՅՐ ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԴԵՊՔԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

«Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 5-րդ մասին և 70-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել առանց «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպման՝ պետական սահմանի անցման կետում տեղակայված ժամանման վայրից մինչև ժամանակավոր պահպանման վայր ապրանքների տեղափոխման, ինչպես նաև մաքսային սահմանին չտեղակայված ժամանակավոր պահպանման մեկ վայրից մաքսային սահմանին չտեղակայված ժամանակավոր պահպանման մեկ այլ վայր մաքսային հսկողության ներքո ապրանքների տեղափոխման կարգը և դեպքերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով սահմանված դեպքերում առանց «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպման՝ ապրանքները տեղափոխվում են հետևյալ դեպքերում՝

1) ապրանքների հայտարարատուն հանդիսանում է երկրորդ կամ երրորդ տիպի վկայական ունեցող լիազորված տնտեսական օպերատոր.

2) անմաքս առևտրի խանութի տիրապետողի կողմից ապրանքների ժամանակավոր պահպանության նպատակով ապրանքները տեղափոխվում են միևնույն մաքսային հսկողության գոտու տարածքում գործող՝ անմաքս առևտրի խանութի տիրապետողի պահեստային տարածքների կամ առևտրի սրահների միջև.

3) ապրանքները տեղափոխվում են միևնույն մաքսային մարմնի գործունեության տարածքում գործող՝ միմյանցից ոչ ավելի, քան 15 կմ հեռավորության վրա տեղակայված՝ ժամանման վայրի և ապրանքների ժամանակավոր պահպանման վայրի միջև կամ ոչ ավելի, քան միմյանցից 15 կմ հեռավորության վրա գտնվող և մաքսային սահմանին չտեղակայված՝ ապրանքների ժամանակավոր պահպանության վայրերի միջև:

3. Անկախ սույն որոշմամբ նախատեսված կարգավորումներից՝

1) սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում ապրանքների տեղափոխումը ժամանակավոր պահպանության վայրեր պետք է իրականացվի «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի կիրառմամբ, եթե լիազորված տնտեսական օպերատորի վկայականը կասեցվել է.

2) սույն որոշման 2-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում ապրանքների տեղափոխումը ժամանակավոր պահպանության վայրեր պետք է իրականացվի «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի կիրառմամբ, եթե ռիսկերի կառավարման համակարգի կողմից տրված է այդպիսի ցուցում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

22.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ